ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

# ՈՐՈՇՈՒՄ
## ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔԻ (ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ) ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ամսաթիվ՝ **04/07/2025**

Փաստաթղթի N՝ **Կ-04072025-04-0141**

գաղտնաբառ՝ **HU3HGDXYPD59**

*Հասցեատեր՝*

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԽԱՉԻԿԻ**

*Անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը*

**Մարզ Արմավիր, համայնք Վաղարշապատ Էջմիածին ք.**

*Ձեր **N 30/06/2025-3-1029** դիմումի հիման վրա վերը նշված անշարժ գույքի նկատմամբ հարուցված իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցվում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի **28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով** սահմանված հիմքերով, քանի որ՝*

**ըստ կադաստրային քարտեզի ներկայացված կոորդինատներով հողամասը հանդիսանում է քաղաքացու սեփականության վարելահող:**

*Միաժամանակ տեղեկացնում ենք, որ սույն որոշումը կայացվել է պետական գրանցման համար ներկայացված, ինչպես նաև գրանցում իրականացնող մարմնի կողմից ստեղծված, հավաքագրված փաստաթղթերի հիման վրա:*

*Սույն որոշումը ստանալուց հետո Դուք իրավունք ունեք «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կրկին դիմելու պետական գրանցման և ներկայացնելու լրացուցիչ փաստաթղթեր, որոնք կուսումնասիրվեն և պետական գրանցման վարույթին կտրվի համապատասխան ընթացք:*

*Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր ԼԻԼԻԹ ԱՋԱՐՅԱՆ **

**Սույն որոշումը հաստատված է էլեկտրոնային եղանակով՝ այն ընդունած պաշտոնատար անձի կողմից:*

PRODUCED BY AN AUTODESK EDUCATIONAL PRODUCT



PRODUCED BY AN AUTODESK EDUCATIONAL PRODUCT

PRODUCED BY AN AUTODESK EDUCATIONAL PRODUCT

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 34 -Ա

«16» ապրիլի 2025թ. ք.Էջմիածին

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 22.12.2009թ. թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 17.03.2025թ. թիվ 2/փ-95 դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Համայնքի ավագանին**

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի գլխավոր հատակագծի փոփոխությունը:
2. ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի վարչական տարածքում գտնվող 04-002-0400-0007 կադաստրային ծածկագրով 0.6 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողերից 0.04 հա մակերեսով հողամասը և համայնքային սեփականություն հանդիսացող 04-002-0400-0026 կադաստրային ծածկագրից 0.0139 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը՝ ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու նպատակով, փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
3. Հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվեկշռում:
4. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով արտացոլել սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունը ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր 8 և Արմավիր 6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի և Ոսկեհատ գյուղի գլխավոր հատակագծերի նախագծերը /գոտևորման նախագծերը/ հաստատելու մասին ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 26.04.2022թ. առաջին նստաշրջանի արտահերթ առաջին նիստի թիվ 80 որոշմամբ և Արմավիրի մարզպետի 19.05.2022թ. թիվ ՄՈ/344-2022 որոշմամբ հաստատված հատակագծում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Իսկականի հետ ճիշտ է
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ Կ. ՍՄԲԱՏՅԱՆ